

Թիֆլիս, 11 (ԱՅՓ)։- Վրաստան Հինգշաբթի օր անջատողական Հարաւային Օսեթիոյ հանրապետութիւնը մասնաշարժով ուժեղ դրկած է՝ մարտանկէզութեան դէմ գործողութեան մը համար: Անոր քայլը կրնայ Վրաստանի եւ Հարաւային Օսեթիոյ միջեւ լարուածութիւնը աւելի եւս սրել: Հարաւային Օսեթիա Վրաստանէն անկախութիւն հռչակած է 1990ական թուականներու սկիզբներուն՝ արհմարտի հակամարտութիւններէ ետք: Անոնց միջեւ լարուածութիւնը աւելի եւս սրած է Էտուարտ Շեւարտնաձէի հրաժարումէն եւ Թիֆլիսի մէջ արեւմտամէտ ղեկավարութեան մը իշխանութեան հասնելէ ետք: Հարաւային Օսեթիա, որ Թիֆլիսի դէմ պայքար մղած է Մոսկուայի պօրակցութեամբ, կ'ուզէ Ռուսիոյ միանալ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԵԱՆ ԿԱՐԳՈՎ

(Հ.Յ.Դ. Հիմնադրութեան 113ամեակին առիթով)

Տարեկանը է դարձեալ եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը աշխարհի փարածքին հերթական անգամ համայն հայութեան կը ներկայանայ նախ հաշուետւորութեան կարգով իր անցած միամեայ ուղին յարկանշած գործունէութիւնը ներկայացնելու, ապա անոր ընթացքին երեսցած արգելակիչ պայմաններուն եւ դժուարութիւններուն մասին զեկուցելու, եւ վերջապէս յառաջիկայ համընդհանուր աշխարհաբնին ուղղուածութիւնը փոխանցելու այն ժողովուրդին, որուն ծառայութեան լծուած է հայ կեանքին մէջ անշրջանցելի եւ փրկական ուժ ներկայացնող 113ամեայ մեր կուսակցութիւնը:

Դաշնակցութեան Օրոնան կամ անոր հիմնադրութեան փարեթիւնով խորհրդանշանոց փոփոխութիւնը արեւելի քան ազդեցիկ առիթ է ինքնագովարարութեան. եւ սակայն՝ թէկուզ առարկայական փոփոխութիւնով, փաստացի օրինակներով: Բայց գործի խորհուրդն ու դաշնակցական աւանդն ու անոր բարոյական արժեքներու համակարգային հասկացողութիւնը կը թելադրեն մեզի՝ պահը հենացնելու նման փորձութեան ազդեցիկութեան եւ խօսելու կարողութեան աշխարհաբնին մասին, ծառայութեան ոգին, բարոյական սկզբունքային կանոններուն եւ ազգայնական պայքարի գաղափարախօսութեան անշեղ մնալու անհրաժեշտութեան մասին: Իսկ այս բոլորը հաշուետւորութեան կարգով:

Տարօրինակ պէտք չէ թուի ուրեմն, որ Հայաստանի Հանրապետութեան քաղաքական մշակոյթի կայացման մէջ հիմնական շրջադարձ նկատուող համաշայնական կառավարութեան կազմութեանն ուղիղ 100 օր ետք, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայաստանի կազմակերպութիւնը կու փար ողջունելի օրինակը քաղաքական փակաւ շեւտուրող մշակոյթը աւելի հարստացնող հաշուետւորութեան: Հաշուետւորութիւն, որ հայրենի մեր կազմակերպութեան կը թելադրէր հայ հասարակութեան ներկայացնելու համաշայնական կառավարութեան մասնակցութեան հիմնաւորումները, անոր առջեւ պարզուող առաջնահերթ հիմնահարցերը, զանոնք շրջանցելու մեր դիրքորոշումները, բայց մանաւանդ անոնց նկատմամբ կուսակցութեան սպաննած յանձնառութիւններն ու այդ յանձնառութիւններու գործնականացման աշխատանքները:

Հաշուետւորութիւն փայլու իրողութիւնը կը բխի դաշնակցական աւանդէ, որուն շարժառիթը ժողովրդանուէր ծառայութիւնն է եւ այդ շրջածիրին մէջ կենսագործուած իրաքանչիւր իրագործումի կամ նոյնիսկ որոշ պարագաներու շահողութիւններու հրապարակային ներկայացումը:

Այս մեկնակէտն է, որ այս օրերուն վերլուծական հայեացքով հանրութեան պիտի ներկայացնէ Դաշնակցութեան դիրքորոշումը ներհայաստանեան քաղաքական կեանքին, կեցուածքը մեր հայրենիքի արտաքին քաղաքական վարքագիծին, դիպարկուումը Արցախեան հակամարտութեան բանակցային գործընթացին, Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու ներկայ դրուածքին, Չաւիսի հարցի միջազգայնացման աշխարհաբններուն, Հայկական Յեղասպանութեան ճանաչման մերօրեայ իրավիճակին, դասական եւ նոր շեւտուրող Սփիւռքի մէջ կազմակերպական աշխատանքներուն, այս բոլորին հեռանկարներուն բայց մանաւանդ նշուած ոլորտներուն մէջ Դաշնակցութեան հսկայական ներդրումին:

Փաստօրէն հայ կեանքի բազմաբնագաւառային համայնապարկերը ուրիշ բան չէ եթէ ոչ համահայկական արժեքներ դաւանող կուսակցութեան մը գործադաշտը, ուր չեն բարձուիր աշխարհաբնի եւ պայքարի նոր մարտահրաւերները: 113ամեայ երկրասարդ մեր կուսակցութիւնը իր աշխարհափարած կառոյցով, կազմակերպութեան արժանաւորութեամբ, պարմական հարուստ աւանդով բոլոր նախադրեալներն ու պարմանները ունի յաջողութեամբ դիմագրաւելու նաեւ նոր մարտահրաւերները:

ՆԱԽԱԳԱՐՆԵՐ ԼԱՇՈՒՏ ԵՒ ԽԱԹԵՍԻ ԴԵՄ՝ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երէկ ժընեւի մէջ այցելեց Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի, որուն հետ տեսակցութիւն մը ունեցաւ վերջինին կեցութեան վայրին մէջ: Երէք քառորդ ժամուան հանդիպումէն ետք նախագահ Խաթեմի իբրանացի լրագրողներուն կատարած իր յայտարարութիւններուն մէջ նշեց, որ Իրան կը պօրակցի նախագահ Լահուտի արտայայտած կեցուածքներուն, որոնք կ'ընդգրկեն նաեւ պաղեստինցի գաղթականներու բնակեցման ծրագիրը մերժումը:



Ան աւելցուց, որ իսլամական երկիրներու վեհաժողովին ընթացքին շեշտուած է այս ծրագիրին մերժումը եւ պահանջուած՝ պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքը: Նախագահ Խաթեմի աւելցուց, որ իսլամական երկիրներու վեհաժողովին, որ պիտի կայանայ Թեհրանի մէջ, պիտի վերահաստատուի այլ կեցուածքը: Նախագահ Խաթեմի ըսաւ, որ նախագահ Լահուտի հետ լուսարձակի տակ առած է պաղեստինցի և իրաքեան տագնապները եւ շեշտեց, որ ինք եւ իբրանացի իր պաշտօնակիցը յոյս յայտնած են, թէ շրջանին մէջ խաղաղութիւն կը հաստատուի: Ան նկատել տուաւ, սակայն, որ խաղաղութեան հաստատման համար հարկ են անհրաժեշտ միջոցառումներ: Նախագահ Խաթեմի շրջանին մէջ խաղաղութեան հաստատումին հիմնական արգելք նկատեց Իս-

րայելը, որ կը շարունակէ պաղեստինցիներուն դէմ իր բռնարարները, մերժելով միջապառնի որեւէ օրէնք: Ան ցաւ յայտնեց, որ այս վերաբերմունքը քաջալերուած է եւ նեցուկ ունի Միացեալ Նահանգները: Ան աւելցուց, որ Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան հաստատումը կը կատարուի բունագրաւուած հողերին թշնամիին նահանջով, ինչպէս նաեւ պաղեստինցի գաղթականներու տունդարձով:

Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 113 ԱՄԵԱԿԸ ՆՇՈՒԵՏԱԻ ՀԱՅՐԵՆԱՆՈՒԷՐ ՈՒ ԱԶԳԱՆՈՒԷՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՄՈՒԹԵԱՄ



Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Լիբանանի մեծ ընտանիքը երէկ Նշեց հայ կեանքի եւ

Հայոց Պատմութեան վերջին մէկ դարը իր անցնելի դրոշմով յատկանշած ազգային եւ յե-

ղափոխական կուսակցութեան 113ամեակը: «Դաշնակցութեան օր»ունաւ տօնակատարութիւնը այս տարի յատուկ շուրջով նշուեցաւ: Մեկնելով այն իրողութեան, որ հայ ժողովուրդը եւ հայրենի երկիրը իրենց գոյութեան սպառնացող նոր մարտահրաւերներ կը դիմագրաւեն, 113 տարիներ շարունակ հայ ժողովուրդի գերագոյն շահերուն պաշտպանութեան համար պայքար մղած Հ.Յ.Դ. Դաշնակցութիւնը չէր կրնար անտարբեր մնալ: Եւ այսօր, 113 տարիներ ետք, Հ.Յ.Դ. Դաշնակցութիւնը միեւնոյն հաստատութեամբ եւ անկոտրում կամքով կը փարի իր ազգայնական առաքելու-

31 ՆՈՐԱԳԻՐՆԵՐ ՄԻԱՅԱՆ Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՆ

Երէկ, երեկոյեան ժամը 7:00ին, Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլեճի սրահին մէջ տեղի ունեցած դաշնակցական երդման արարողութեան ընթացքին, Հ.Յ.Դ. ՉՈՄԷՆ եւ ԼԵՄԷՆ 31 նորագիրներ միացան Հ.Յ.Դ. Դաշնակցութեան շարքերուն: Հ.Յ.Դ. 113ամեակի տօնակատարութեան օրուան զուգահիշող երդման արարողութեան կնքահայրն էր Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ ընկ. Ալլապիթ Աճեմեան, որ նորագիրներուն ուղղած իր պատգամին մէջ նշեց, թէ դաշնակցականի երդում տալով անհատը կու գայ միանալու այն գաղափարական շարժումին, որ անցնող 113 տարիներուն ընթացքին, հակառակ ամէն տեսակի դժուարութիւններուն, շարունակեց իր ազգանուէր առաքելութիւնը: Ապա, 31 նորագիրները տունի դաշնակցականի իրենց երդումը:

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտ երէկ ժընեւի մէջ այցելեց Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի, որուն հետ տեսակցութիւն մը ունեցաւ վերջինին կեցութեան վայրին մէջ: Երէք քառորդ ժամուան հանդիպումէն ետք նախագահ Խաթեմի իբրանացի լրագրողներուն կատարած իր յայտարարութիւններուն մէջ նշեց, որ Իրան կը պօրակցի նախագահ Լահուտի արտայայտած կեցուածքներուն, որոնք կ'ընդգրկեն նաեւ պաղեստինցի գաղթականներու բնակեցման ծրագիրը մերժումը: Ան աւելցուց, որ իսլամական երկիրներու վեհաժողովին ընթացքին շեշտուած է այս ծրագիրին մերժումը եւ պահանջուած՝ պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքը: Նախագահ Խաթեմի աւելցուց, որ իսլամական երկիրներու վեհաժողովին, որ պիտի կայանայ Թեհրանի մէջ, պիտի վերահաստատուի այլ կեցուածքը: Նախագահ Խաթեմի ըսաւ, որ նախագահ Լահուտի հետ լուսարձակի տակ առած է պաղեստինցի և իրաքեան տագնապները եւ շեշտեց, որ ինք եւ իբրանացի իր պաշտօնակիցը յոյս յայտնած են, թէ շրջանին մէջ խաղաղութիւն կը հաստատուի: Ան նկատել տուաւ, սակայն, որ խաղաղութեան հաստատման համար հարկ են անհրաժեշտ միջոցառումներ: Նախագահ Խաթեմի շրջանին մէջ խաղաղութեան հաստատումին հիմնական արգելք նկատեց Իս-

րայելը, որ կը շարունակէ պաղեստինցիներուն դէմ իր բռնարարները, մերժելով միջապառնի որեւէ օրէնք: Ան ցաւ յայտնեց, որ այս վերաբերմունքը քաջալերուած է եւ նեցուկ ունի Միացեալ Նահանգները: Ան աւելցուց, որ Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան հաստատումը կը կատարուի բունագրաւուած հողերին թշնամիին նահանջով, ինչպէս նաեւ պաղեստինցի գաղթականներու տունդարձով:

ԺԸՆԵՒԻ ՄԷՁ

ՔՈՉԱՐԵԱՆ - ԱԼԻԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Ժընեւի մէջ երէկ տեղի ունեցաւ Հայաստանի եւ Ալբանիայի նախագահներ Ռոպերթ Քոչարեանի եւ Իլիւմ Ալիեւի հանդիպումը: Երկու նախագահները կը մասնակցին ժընեւի մէջ կայացող Տեղեկատուական Հասարակութեան Համաշխարհային Վեհաժողովին: Հանդիպման սկիզբը մասնակցեցան նաեւ ԵԱՀԿի Միւսքի խմբակի նախագահները, ապա Քոչարեան եւ Ալիեւ հանդիպումը շարունակեցին առանձին: Ծար.՝ էջ 3

ԱԿՆԱՐԿ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐՈՂԱԿԱՆ ՃԱՆԱՉՈՒՄ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու երկու օր առաջուան կայացուցած որոշումը նախ մտածել կու տայ Հայաստանին կատարուած օժանդակութիւններու կրճատումին մասին, որ բնականաբար տնտեսական կարիքներու ուսումնասիրութիւններու վրայ հիմնուած խորք չունի, այլ պարզապէս քաղաքական հաշուարկներու արդարեւ, անիկա ակնբերութիւն կը տեղադրուի Միացեալ Նահանգներ-Թուրքիա-Ալբանիայի քաղաքական յարաբերակցութեան հարթութեան վրայ: Լուսարձակի տակ կու գայ ասոր փոփոխեալ, 2.5 միլիոն տոլարի արտաքին ռազմական ֆինանսաւորման եւ առնուապէս 900.000 ամերիկեան տոլար՝ միջապառնի կրթութեան եւ ուսուցման ծրագրին յատկացումներու ամերիկեան որոշումը:

Այլապէս վերլուծելի երեւոյթ է հայաստանեան օժանդակութեան կրճատումն ու անոր փոփոխեալ փնտրական առումով նպատակային օժանդակութիւնը. երեւոյթները բնականաբար պէտք է դիտարկել՝ այլ պետութիւններու նկատմամբ կատարուող օժանդակութիւններու գումարներուն հետ, նկատի ունենալ քաղաքականը նոյն պետութիւններուն առընչութեամբ վերջին որոշումներէն առիւն արձանագրուած աճին կամ կրճատումին, կամ՝ անոնց մարդասիրական, քաղաքական, տնտեսական թէ փնտրական բնոյթը: Բայց արդէն քանի երրորդ անգամ ըլլալով ամերիկեան համապատասխան կառոյցին որոշումը՝ Հայաստանի օժանդակութիւններուն, առանձին կետով կը ներառեն նաեւ Լեռնային Ղարաբաղին 5 միլիոն տոլարի մարդասիրական օգնութիւն տրամադրելու հաստատումը, որ նոյնպէս կը տեղադրուի վերը նշուած հարթութեան վրայ:

Առաջին հայեացքով Լեռնային Ղարաբաղի վերապահուած որոշումը քաղաքականապէս ընդ «մարդասիրական» տարապը, ի տարբերութիւն, (թէ ոչ՝ ի հակադրութիւն) Հայաստանի Հանրապետութեան քաղաքական թէ փնտրական նպատակներու յատկացում որոշումին, հիմնովին քաղաքական նշանակութիւն կ'ունենայ, երբ նկատի կ'ունենանք Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան իրաւական գետնի վրայ ցարդ չկայացած ճանաչումը ընդհանրապէս աշխարհի անհայտ պետութիւններուն եւ այս պարագային յատկապէս Ամերիկայի Միացեալ Նահանգներուն կողմէ: Լեռնային Ղարաբաղի համար Ամերիկայի Միացեալ Նահանգներու որոշած 5 միլիոն տոլարի թէկուզ փոքր մարդասիրական նպատակային յատկացումը, քաղաքական մեկնաբանութեամբ յատկացող պետութեան կողմէ պարզապէս իրողական ճանաչումն է օժանդակութիւնը ստացող կողմին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան:

ՍՈՒՐԻՈՅ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՌԻՍԿՆ ԵՄԵՆԱՐԱՐԸ ԱՅՑԵԼԵՑ ՊԵՐՐԻԻ, ՀԱՐԻՐԻԻ ԵՒ ԺԸՍԸՐԻ

Սուրիոյ բարձրագոյն ուսման նախարար Հասի Մուրթատա երէկ Այն Էլ Թիւնէի մէջ պաշտօնական տեսակցութիւն մը ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըրիի հետ:

Հանդիպումին քննարկուեցան Լիբանան - Սուրիա երկկողմանի յարաբերութիւնները եւ շեշտուեցաւ կրթական մակարդակի վրայ իրանական-սուրիական գործակցութեան կարեւորութիւնը:

Սուրթատա տեսակցութիւններ ունեցաւ նաեւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի, իրանացի իր պաշտօնակիցին՝ կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Սամիր Փըբըրի եւ իրանա-սուրիական գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի Խուրիի:

ԴԱՏԱԽԱՉ ՄԱՏԻ ՄԵՐԺԵՑ ԼԱԽԿԻՆ ԼԱԽԱՐԱՐ ԱՊՏԱԼԼԱՅԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ

Պէյրութի աւագ քննիչ դատախաչ Հաթէմ Մատի երէկ մերժեց երկրագործութեան նախկին նախարար Ալի Ապտալլայի եւ անոր եղբոր՝ Սուլթան Ապտալլայի ապատ արձակման պահանջը:

Նախարար Ապտալլա, որ ներկայիս բանտարկուած է, ամբաստանուած է երկրագործութեան ծիրէն ներս իրանական ամբերկեան փոխատուութեանը ընթացքին ապօրինութիւններ կատարելու յանցանքով:

ՄԱՀԱՉԴ

Հ. Յ. Դ. «Քրիստափոր» կոմիտէն կը գումէ իր շրջանի ընկերներէն՝

ՊԵՏՐՈՍ ՓԵԼԹԷՔԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ 11 Դեկտեմբեր 2003ին:

ՄԱՀԱՉԴ

Տիկին Ռոզին Փելթէքեան
Տէր եւ տիկին Բաֆֆի Պետոյեան եւ զաւակները՝
Գարլ եւ Քրիսթ
Տէր եւ տիկին Դաւիթ Դարբինեան եւ զաւակը՝ Մհեր
Տիկին Հերմինէ Փելթէքեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Յակոբ Փելթէքեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Աշոտ Նանոյեան
Տէր եւ տիկին Ալպէր Նանոյեան
Տէր եւ տիկին Արա Նանոյեան
Տէր եւ տիկին Նազարէթ Տառուուտ
Տէր եւ տիկին Անդրանիկ Պասթաճեան եւ զաւակուհի
եւ Համայն ազգականներ կը գումեն իրենց ամուսնոյն,
հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝

ՊԵՏՐՈՍ Ս. ՓԵԼԹԷՔԵԱՆԻ (Ծնեալ՝ Չորք Մարգարեան, 1930ին)

Մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 11 Դեկտեմբեր 2003ին, կէսօրէ ետք ժամը 4:30ին, իր բնակարանին մէջ, սրտի կաթուածի հետեանքով:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 12 Դեկտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Յորն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապը:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Չարիֆ, «Ապրոյեան» շէնք, Տրոյ յարկ, Ուրբաթ 12, Շաբաթ 13 եւ Կիրակի 14 Դեկտեմբերին:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել Թոշնոց Բոյնին:

ՄԱՀԱՉԴ

Տիար Ազատ Պարսումեան
Տէր եւ տիկին Մոսիկ Պարսումեան եւ զաւակը
Տիար Արա Պարսումեան
Տէր եւ տիկին Նաչիկ Պարսումեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Ալէն եւ Սեդա Բարս
Տէր եւ տիկին Շահէ եւ Մայրա Շահուկարեան եւ զաւակուհի

Տէր եւ տիկին Գրիգոր Նաչեբեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Յովսէփ Յովսէփեան եւ զաւակուհի
եւ Համայն ազգականներ կը գումեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ՆՈՒԱՐԴ ՊԱՐՍՈՒՄԵԱՆԻ (Ծնեալ՝ ԽԱՉԵՐԵԱՆ)

Մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 10 Դեկտեմբեր 2003ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 10 Դեկտեմբեր, կէսօրուան ժամը 1:00ին, Էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապը:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին Էջրեֆիէի Ազատամարտական միջոցառումներու կենտրոնի մէջ, Չորեքշաբթի 10, Հինգշաբթի 11 եւ Ուրբաթ 12 Դեկտեմբերին, առաւօտեան ժամը 10:00էն երեկոյեան ժամը 7:00:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄՔ ՄԵԾ ՑՈՅՑ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԱՌՋԵՒ

Լիբանանեան Համալսարանի դասախօսներու լիկան երէկ կազմակերպեց մեծ ցոյց մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին երեսփոխաններ Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտուն, Ղազի Չաաթէր, Ապտալլա Քասիր, Մանսուր Պոն, Տորէտ Եադի, Փորժ Նաժմ, Հիւսէյն Հաժ Հասան, Ֆարէս Սուայս, Իպրահիմ Պայան եւ Ղասսան Մուխայթէր, ինչպէս նաեւ Լիբանանեան Համալսարանի դասախօսներու լիկայի նախագահ Շարպէլ Քֆուրի, կրթական տարբեր մարպերու ներկայացուցիչներ եւ մեծ թիւով ուսանողներ:

Ցոյցը ընթացաւ քայլարշաւի ձեւով, առաւօտեան ժամը 10:00ին՝ Պարպիի հրապարակէն եւ անցաւ Պարթալի, Ռիատ Սոյիի եւ Էսքուայի շրջաններէն, հասնելով մինչեւ խորհրդարան եւ ապա վարչապետարան: Յուզարարները կը պարզէին իրանական դրօշակներ եւ դասախօսներուն պահանջները ներկայացնող պատտառներ:

Դասախօսներու լիկայի նախագահ Շարպէլ Քֆուրի իր խօսքին մէջ պահանջեց քաղաքական անձնաւորութիւններէն՝ չմիջամտել Լիբանանեան Համալսարանի գործունէութեանը եւ պատրաստակամութիւն յայտնեց ամէն ջանք ի գործ դնել՝ հսկելու համար համալսարանի ներկայացուցչական խորհուրդներու վերակազմութեան: Ան ըսաւ, որ իրենց պահանջները ի նպաստ դասախօսներուն, ուսանողներուն եւ համալսարանի բոլոր պաշտօնատարներուն են: Քֆուրի շեշտեց, որ լիկայի արդէն իսկ չորսշաբթեայ դրութեամբ յայտարարուած բաց դասադուրը պիտի շարունակուի մինչեւ պահանջներու ամբողջական գործադրութիւն:

Երեսփոխան Պայտուն շեշտեց, որ Լիբանանեան Համալսարանը քաղաքական աճուրդի նիւթ չի կրնար ըլլալ տարբեր կողմերու միջեւ եւ ընդգծեց, որ անհրաժեշտ է համալսարանին տրամադրուած պիտեմէն նուազագոյնը 20 առ հարիւրով աւելցնել:

Պայտուն կոչ ուղղեց կառավարութեան՝ քննարկել Լիբանանեան Համալսարանի կրթական ծրագիրները եւ աշխատիլ անոր բարգաւաճման ի խնդիր, ճշդելով ազգային քաղաքականութիւն:

Երեսփոխան Չաաթէր խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըրիի անունով պօրակցութիւն յայտնեց Լիբանանեան Համալսարանի «անկախութեան»:

Երեսփոխան Քասիր նկատել տուաւ, որ Լիբանանեան Համալսարանի դէմ կատարուող որեւէ «յարձակում» երկրին դէմ յարձակում կը նկատուի:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՖՈՆՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Ելեւմուտքի նախարար Ֆուատ Սիւնորա երէկ ընդունեց Միջազգային Դրամական Ֆոնտի ընդհանուր տնօրէն Ալէն Պիֆանի եւ նախարարութեան բարգաւաճման ծրագրի ՄԱԿի ներկայացուցիչ ժիհատ Ապար: Քննարկուեցան Լիբանանի տնտեսական

ԿՈՒՉՈՒԻ ԾԱԽՈՒ Ե

● Ոսկի փայլեցնող (ձիւածի) վարպետ մը: Դիմել՝ հեռ. 01- 242549:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ (Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ Այսօր՝ Ուրբաթ, 12 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 6:00ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ:

Դասախօս՝
ԳԵՂՊ. Տ. ՆՈՐԱՅՐ Ե. ՎՐԴ. ԱՇՁԳԵԱՆ
Նիւթ՝
«ՆԱՐԵԿԱՅԻ»
Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալները:
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ

ՄԵԴՈ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ ԵՒ ՇԱՔԻ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Այնճարի մէջ: Ըն. 01-262599:

ԾԱԽՈՒ ՇՔԵՂ ՅԱՐԿԱՔԱԺԻՆՆԵՐ

● Անթիլիաս - Սգիերի սկիզբ: Ըն. 04 523926:

ՀՈՎԱՆԱՊՈՒԹԵԱՄՔ ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ (Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)

ՆԱՍՏԱԿԱՆՈՒԹԵԱՄՔ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ԵՂԱՅՐՆԵՐՈՒ ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ - ՎԱՃԱՌԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ

Լոռայի մարզի ԼԵՒՈՆ ԹԱՇՏԵԱՆ
Հասցի՝ Սպիտակ քաղաքի Կոմիտասի պողոտայի «Ազգային»ին

Բացման հանդիսարարութիւնը պիտի կ'ունենայ Ուրբաթ, 19 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «ԱՂԱՒԵՆՆԵՒ ԵՎ Ե.Ս.Ս.» մարզամշակութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ:

Ճանապարհորդութիւնը պիտի շարունակուի Շաբաթ 20 եւ Կիրակի 21 Դեկտեմբեր 2003, կէսօրէ կար ժամը 4:00էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԵՄՊԱՆ ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒԷՅՏԻՆ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ընդունեց Լիբանանի մէջ Արաբական Միացեալ Էմիրութիւններու դեսպան Սուլթան Սուէյտին, որուն հետ քննարկեց Լիբանան - Ա. Մ. Էմիրութիւններ երկկողմանի յարաբերութիւնները, յատկապէս մարմնակրթութեան մարպի ծիրէն ներս:

Հանդիպումին ետք Սուէյտի ըսաւ, որ քննարկած են համաձայնագիրներ ստորագրելու եւ պանոնք գործադրելու կարելիութիւնները, նկատել տալով, որ նման յարաբերութիւններ պիտի ամրապնդեն Լիբանան - Ա. Մ. Էմիրութիւններ եղբայրական կապը:

ՔՈՐԱՅԹԵՄԻ ՄԷՋ

ՀԱՐԻՐԻ - ՖԸՐԶԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քորայթէմի մէջ ընդունեց խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրպլին, որուն հետ քննարկեց ներքին-բանանեան իրավիճակը, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները:

Միւս կողմէ, վարչապետ Հարիրի երէկ հրապարակեց շրջաբերական մը, որուն մէջ նշեց, թէ պետական բոլոր հաստատութիւններն ու քաղաքապետարանները փակ պիտի մնան Հինգշաբթի, 25 Դեկտեմբեր 2003 եւ Հինգշաբթի, 1 Յունուար 2004ին, Կաղանդի եւ Ս. Տննդեան տօնին առիթով:

ՊԸՐԻ ՏԵՍԱԿՑԵՅԱԻ ԿԱՊՈՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըրի երէկ ընդունեց Կապոնի ընկերային հարցերու պետական նախարար Անտրէ Օպանը, ներկայութեամբ Լիբանանի մէջ Կապոնի դեսպան Սիմոն Ալֆրէտ Իմարիի եւ երեսփոխան Սիւնորայի հետ տալով մամլոյ միացեալ ասուլիս մը:

Ս. ՅԱԿՈՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԷՇՐԵՖԻ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ Ս. ՅԱԿՈՐԻ ՇԱՔԹՈՒԱՆ
ՇԱՔԱԹ, 13 ԴԵԿՏԵՄԵՐ 2003
Ս. Հաղորդութիւն առաւօտեան ժամը 8:00ին:
- Աղօթեմք, ոչխարներու գեցում, մատաղի-«հերիսայի» պատրաստութիւն, կէսօրէ ետք ժամը 4:00էն սկսեալ եւ ամբողջ գիշերը:
- Սուսա Լեթան, Այնճարի տաւուլ-գունամ:
- Ազգագրական, գաւառական, հայրենասիրական երգերով եւ նուագներով ելոյթ կ'ունենան

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- 8:45 «Աստղեր»
- 9:00 «Տօնական օրեր»
- 9:40 «Օրուան տոն»
- 10:45 «Ի՞նչպէս կը տօնէք» արտօրուան հիւրը եւ երեսփոխան Աթէֆ Մաժալանի
- 3:00 «Ի՞նչպէս կը տօնէք» (կրկնութիւն)
- 3:10 Hit Parade. Արաբերէն յայտագիր
- 4:45 «Բարի երեկոյ Վանայ Չայնէն» ուղղակի ձայնագրութիւն
- 6:50 «Օրուան տոն» (կրկնութիւն)
- 7:05 «Ի՞նչպէս կը տօնէք» (կրկնութիւն)
- 7:15 «Ռազմիկ» խաւարացի ուղղակի ձայնագրութիւն

ՊՐԻԲՄԵԼԻ ԵՒ ՓԱՐԻՉԻ ՄԷՋ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒ ԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ ՂԵՍ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՐԺՈՂԱԿԱՆ ԿԵՑՈՒԱԾԵՐ ՓՈՒՍԱՆՑԵԼ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրիբի կողմից Պրիբի գործունեության խորհրդարանական պատուիրակությունը երեկ շարունակեց իր հանդիպումները՝ պեղծիքացի ծերակուտականներու եւ երեսփոխաններու հետ: Հանդիպումներուն քննարկուեցան Միջին Արեւելքի իրադրությունները, ինչպէս նաեւ պաղեստինեւիւրայելեան տագնապի լուծման նոր տարբերակներ:

Երեսփոխաններ Պուրոս Հարպ, Մոհամեմ Քապպանի եւ Ալի Պեպլի իրենց հանդիպումներուն ընթացքին շեշտեցին պաղեստինցիները իրենց գտնուած երկիրներուն մէջ բնակեցնելու ծրագրերին համաձայն Լիբանանի մերժողական կեցուածքը, աւելցնելով, որ Պէյրութ կը պահանջէ պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքը:

ՓԱՐԻՉԻ ՄԷՋ

Խորհրդարանական այլ լանձնախումբ մը, որուն մաս կը կազմեն երեսփոխաններ Նապի Տը Ֆրէյժ, Նամաթայա Ապի Նասր, Այման Շուքէյր, Սիմէն Ֆաթթաբ եւ Ալի Սորէյս, երէկ ուղղուեցան Փարիզ, ուր հանդիպումներ ունեցան ֆրանսացի ծերակուտականներու եւ երեսփոխաններու հետ, անոնց բացատրելով Լիբանանի պաշտօնական կեցուածքը, որ կը մերժէ պաղեստինցի գաղթականներու բնակեցման ծրագիրը, պահանջելով անոնց տունդարձի իրաւունքը:

Լիբանանեան պատուիրակութիւնը, խորհրդարանի նախագահ Նեպիի Պրիբիէն նամակ մը փոխանցեց նաեւ Ֆրանսայի Օերակոյտի նախագահ Քրիսթիան Փոնսըլէի եւ Ալգային Ժողովի նախագահ Ժան Լուի Տըպրէի:

ՔՈՉԱՐԵԱՆ - ԱԼԻԵՒ

Շարունակուած Ա. Էջէն

Մէկուկէս ժամ տեւած հանդիպումէն ետք նախագահները կարճ հանդիպում մը ունեցան լրագրողներու հետ եւ հանդիպումին մասին ներկայացուցին որոշ մանրամասնութիւններ: Նախագահ Քոչարեան գոհունակութիւն յայտնեց եւ նշեց, որ հանդիպումը ընթացած է անկեղծ մթնոլորտի մէջ: Ան ըսաւ, թէ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման յատուկ նախագիծեր չեն քննարկուած, միայն կարծիքներու փոխանակում կատարուած է: Անոնք փորձած են վերլուծել բանակցային գործընթացին մէջ ստեղծուած նոր իրավիճակը:

Իլիամ Ալիեւ իր կարգին նշեց, որ նախագահ Քոչարեանի հետ քննարկման առարկայ դարձած է բանակցային գործընթացի ցարդ կտրած ճամբան, որուն շուրջ տրուած են գնահատականներ: Ան դրական նկատեց հանդիպման կայացումը: Ըստ Իլիամ Ալիեւի, երկու երկիրներու նախագահներն այլ անկեղծ ձգտում ունին հասնելու տագնապին լուծման:

Ալրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիբե ժընեի մէջ յայտարարեց, թէ Հայաստանի եւ Ալրպէյճանի նախագահներ Ռոպէրթ Քոչարեանի եւ Իլիամ Ալիեւի միջեւ հանդիպումը կրնայ հիմք ծառայել հետագայ բանակցութիւններու համար:

«Նախագահներ Հայտար Ալիեւ եւ Ռոպէրթ Քոչարեան կը վերադառնան Պարաբաղեան տագնապի լուծման ուղիներու որոնումով: Մէկուկէս մէկը տեղեակ է, թէ ի՞նչ շուրջ անոնք համաձայնած էին, որովհետեւ այդ բանակցութիւններուն արդիւնքները որեւէ փաստաթուղթի մէջ չեն արձանագրուած: Հետեւաբար, Հայաստան եւ Ալրպէյճան որեւէ պարտաւորութիւն չեն ստանձնած, եւ Իլիամ Ալիեւ կրնայ սկսիլ վերոյն: Ան կրնայ նոր պահանջներ եւ մտեցումներ ունենայ», յայտարարեց Ալրպէյճանի արտաքին գործոց նախարարը:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան լրագրողներու յայտնեց, թէ ժընեի մէջ Հայաստանի եւ Ալրպէյճանի նախագահները բանակցութիւններ չեն վարած, այլ պարզապէս կարծիքներու փոխանակում կատարած են: Նախարարը նկատել տուաւ, թէ հայկական կողմին համար կարեւոր էր, թէ Իլիամ Ալիեւ պատրաստ է բանակցութիւններուն սկսիլ՝ ընդհատուած կէտէն: Ան սակայն մանրամասնութիւններ չէ տուած այն հարցին գծով, թէ հայկական կողմը ի՞նչ քայլերու կրնայ զինել, եթէ Իլիամ Ալիեւ որոշէ բանակցութիւններ սկսիլ վերոյն:

«ԱՆՂԱՆԻԿ» ՄԵՋԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ԱՐԱՄ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ
100 ԱՄԵՆԱԿ
Կը ներկայացնէ՝
ՉԱՔԱՐ ԲԵՇԻՇԵԱՆ
Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, Հ.Բ.Ը.Մ. - Հ.Ե.Ը. «Չապէլ Մովսեսեան» կեդրոն, Ըրոշ Թապօ:

«ԱՉԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00:
ՄՄԱՉԱԶԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԼՈՐ ՏԱՐՈՒՆ ԸՐՋԱՊՏՈՅՑՆԵՐ
1.- 29 Դեկտեմբեր - 5 Յունուար. Երեւան միայն 225 \$
2.- 30 Դեկտեմբեր - 2 Յունուար Կիպրոս լծան պտոյտներով 245 \$
3.- 23 - 27 Դեկտեմբեր եւ 29 Դեկտեմբեր - 2 Յունուար Գահիրէ 450 \$:
4.- Գահիրէ, Լուսնոս, Ատուան, 27 Դեկտեմբեր - 2 Յունուար 730 \$
5.- 30 Դեկտեմբեր - 5 Յունուար Թունուզ 585 \$
Հայաստան երթ ու դարձ օդանաւի տոմսակ ARMAVIA միայն 111 \$
ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐՁ, 01 - 261177 / 03 - 233978
01 - 240654 գիշերները 01 / 258987

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄԵՋԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ «ՆԻԿՈԼ ԱՂԱՍԵՆ» ՄԱՍՆԱՃԻՒԴ - ԱՆԹԻԼԻԱՍ
ՅՈՒՅԱՇԱՆՂԵՍ
Արցախի վաստակաշատ գեղանկարիչ
ՍԱՍՈՒԷԼ ԳԱՐԻԷԼԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒ
Հովանաւորութեամբ՝
ՊՈՒՐՁ ՀԱՍՈՒՏԻ ԵՐԱՔԱՊԵՏԱԿԱՆ ՆՈՒՐՈՒՂԻՆ
Բացում՝ Որբաթ, 12 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան-Հ. Ս. Ը. Մ.» Մարզաձաղկութային Համալիրի «Մերձ Թովմասեան» սրահին մէջ:
Յուցահանդէսը կը շարունակուի 13 եւ 14 Դեկտեմբերին, առաւօտեան ժամը 11:00էն երեկոյեան ժամը 9:00:
ԾԱՆՕԹ.- Այս ձեռնարկին ամբողջ հատոյթը կը տրամադրուի Արցախի Ֆոնտին: **ՇՐԱԷՐ**

السيرة | السيرة | السيرة | السيرة | السيرة
ԻՆՏ ԿՐ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԾԵՐԹԵՐԸ

Ժընեի մէջ կայացած Տեղեկատուական Համաշխարհային Վեհաժողովը եւ անոր ընթացքին Լիբանանի նախագահ Վոր. Ըմիլ Լահուտի արտասանած խօսքը, Լիբանանի մէջ Ամերիկայի դեսպանատուն մուտք գործելու փորձ կատարած լիբանանցիի մը ձեռքաւարութիւնը եւ Լիբանանեան Համալր-սարանի դասախօսութիւններուն մասնակցութեան ձեռնարկը կը գրաւեն 11 Դեկտեմբերի լիբանանեան օրաթերթերուն էջերը:

Շրջանային եւ միջազգային լուրերու կարգին Շարուն - Քոչարէյ հանդիպումին նախապատրաստութիւնները, Իրաքի մէջ վերաշինութեան աշխատանքներուն մասնակցելու համար ճշդուած երկիրներու ցանկը, իրաքեան պատերազմի շրջաններուն մէջ շարունակուող յարձակումները եւ Մուպարաքի եւ Խաթեմի հանդիպումը կը լիբանանեան օրաթերթերուն գլխաւոր լուրերը:

«Մնուար» գրած է, թէ լիբանանեան բանակը կը կասեցնէ պայթումի փորձ մը Լիբանանի մէջ ամերիկեան դեսպանատան մէջ: Ուսուցիչները 11 Դեկտեմբերին փողոց պիտի իջնեն, իսկ ուսանողներուն ձակատագիրը՝ հարցականի տակ:

Ըստ «Սաֆիր»ի, Լիբանան բողոք կը ներկայացնէ ՄԱԿի լիբանանցի երկու որսորդներու սպանութեան հարցով, իսկ Լահուտի կարգին Անանի հետ կը քննարկէ որսորդներու սպանութեան պարագան:

«Սաֆիր» օրաթերթը գրած է, թէ Լահուտի խօսքին մէջ յայտնեց, թէ նորարարութիւններն ու արդիականացումները անկախացումներու Իրաքի մէջ գործունէութեան կասեցման որոշումէն: «Սաֆիր» գրած է, թէ Ուաշինկթոն կը մերժէ եղող երկիրներուն ներդրումը Իրաքի մէջ շինարարական աշխատանքներուն, իսկ Եւրոպայ կը սպասուի միջազգային առեւտրական խորհուրդին դիմել այս հարցով:

Ըստ «Քիֆաի Արապի»ի, Ուաշինկթոն պատերազմին դէմ եղողները կը պատժէ՝ Իրաքի վերաշինութեան աշխատանքի իրաւունքէ վրկելով պանոսը:

«Մնուար» դիտել տուած է, թէ Արաֆաթ յայտարարեց, որ Շարուն այն յայտարարութիւնները, որոնց համաձայն հրեական բնակեցման վայրեր պիտի վերցուն, պարզապէս բեմադրութիւն մըն է եւ հանրային կարծիքին աչքին ցանուող փոշի:

«Սաֆիր»ի համաձայն, Շարուն եւ Շաթ հանդիպեցան, սակայն չհամաձայնեցան վեհաժողովի պայմաններուն շուրջ:

«Տիար» գրած է, թէ վարչապետ Հարիրի յայտնեց, որ լիբանանցիները կը մերժեն անարդարութիւնը եւ իրենց նկատմամբ եղած վատ վարուելակերպը: Ըստ թերթին, բանակայինները կասեցուցին ռումբեր պարունակող պայուսակ կողմ լիբանանցիի մը եւ պաղեստինցիի մը մուտքը ամերիկեան դեսպանատուն:

Թերթը նշած է, թէ Իրաքի մէջ համաձայնագիրներ կը կնքուին 18 միլիոն տոլարի, իսկ Ուաշինկթոնի ուղղութեամբ:

Ըստ «Մնուար»ի, միջազգային տեղեկագրի մը մէջ նշուած է, թէ արաբական աշխարհը կը ձախողի բարեկարգումի ծրագիրներ յաջողցնելու մէջ:

«Մնուար» գրած է, թէ 24 տարիէ ի վեր առաջին անգամ ըլլալով հանդիպում տեղի կ'ունենայ Իրանի եւ Եգիպտոսի նախագահներուն միջեւ:

«Սաֆիր» դիտել տուած է, թէ իրանեան յեղափոխութենէն ի վեր առաջին անգամ ըլլալով Մուպարաքի եւ Խաթեմի կը հանդիպին եւ կը յայտարարեն, որ իրենց յարաբերութիւնները բնականուրէն են:

Ըստ «Սաֆիր»ի, Մուպարաքի եւ Խաթեմի միջեւ կայացած պատմական հանդիպումը դուռ կը բանայ բնականոն յարաբերութիւններու հաստատման: «Քիֆաի Արապի» նշած է, թէ տգիտութեան դէմ արշաւը ծայր կ'առնէ ժընեի մէջ կայացած վեհաժողովին:

Ըստ թերթին, Քոնկրետի պատուիրակութիւն մը Մուրա կ'այցելէ՝ ճնշումները սաստկացնելու միտումով:

TOGETHER WE ARE STRONGER
ՄԻԱՍԻՆ ԱԲԵԼԻ ԶՕՐԱԴՈՐ ԵՆՔ
U.S.M.F. AFHIL
Armenian Mutual Fund
Tel / Fax: 01 242556 - 242557

TOSHIBA
GET THE BIG PICTURE
AT A SMALL PRICE
CITY FACE
HyperPro 100HZ
MADE IN JAPAN
FREE TOSHIBA DVD
MADE IN JAPAN
VALUE \$345+VAT
UNILEC
TEL: 04.718444

Նորաստի Նորաստի

Ո՞Ր ԳԱՅԱԾ ԵՆ ՀՈՎԱՆԱՌՐՆԵՐԸ

ԵՐՈՒՊԱՅԻ ԱՐՈՒԵՍՏԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ՄԻՁՏ ԱՊԱԻՆԱԾ ԵՆ ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ՝ ԿԱՆԳՈՒՆ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ: ՍԱԿԱՅՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՅՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՋԱՆՈՆՔ ԿԸ ԱՐԵՆ ԳՈՅԱՏԵԲԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑՆԵՐ ԳՏՆԵԼՈՒ: «ԹԱՅԱ» ԿԸ ԳՐԷ.

Իտալական քաղաք-պետությունները 13րդ դարում իրենց մշակութային իրերը նույնքան զգուշորեն պահպանել են, որքան իրենց սահմանները: 800 տարի ետք իտալիոյ մէջ, ուր Միքելանճելոյ և Թիտիանի կը համարուին ազգային ժառանգություններ, այս առաջը տակաւին ամուրէի: Թանգարաններու մէջ կախուած գլուխ գործոցներէ մինչեւ սեփական հաւաքածոներու մէջ պահուած թանկագին գործեր կարելի չէ տեղափոխել առանց պետական արտօնություններու: Իտալիոյ գրեթէ բոլոր գանձերը նախանձելի կերպով կը վայելեն պետության պաշտպանությունը: Արուեստի պատմությունը եւ դասական հնագիտությունը իտալացի մասնագէտ Սալվատորէ Սեթիսի կ'ըսէ: «Մշակույթը կը պարունակէ պատմական իշխողություն մը, որ կը պատկանի երկրի բնակիչներուն»:

տանիոյ մէջ, համեմատությունը 4 առ հարիւր է: Սակայն նոյնիսկ այն երկիրներուն մէջ, ուր արուեստներն ու առեւտուրը զիրար ամբողջացընող մարզեր կը նկատուին, սեփական մարզին կողմէ կատարուած յատկացումները հետզհետէ կարեւորութիւն կը ստանան: Յրանսայի մէջ առեւտրական գործօնը մշակույթի նախախարժան-ժառ-ժառ Ալակոնի արուեստներու նոր քաղաքականություններ կործարելու կը կազմէ:

Արուեստի մարզերու պատասխանատուներ ստիպուած են առեւտրական ընկերություններու հետ գործակցելով իրենց ծախսերը հոգալ նաեւ այլ պատճառներով: Եւրոպական պետություններ արուեստի հիմնարկները կը մղեն իրենց պիտոճէները հաւասարակշիւրելու: Անոնք այլեւս նիւթական նպաստ չեն յատկացներ սեփական նպատակներ հետապնդող թանգարաններու եւ կը փակեն այն թատրոնները, որոնք շահաբեր չեն: Այս բոլորը խոր անձկություններ յառաջացուցած են գեղարուեստական շրջանակներու մէջ: Որքանո՞վ արդարանալի են այս մտահոգությունները: Ոմանց համար առեւտուրն ու մշակույթը միաժողովուրդ են պատահականություններ: Այնքան չափազանց չեն, թէ առեւտրական շահ ապահովելու նպատակը կրնայ գերադասուիլ այլ նպատակներէ, ինչպէս՝ ստեղծագործական զարգացում: Ուրիշները նման հակահարուցումները պարզապէս արագ հակազդեցություն մը կը նկատեն: «Մտաւորական շտեմութիւն է ստիպում», - կ'ըսէ արուեստներու եւ առեւտուրի միջեւ գործակցության եզրերը զարգացնող «Արթիստիկ Պիզնո» ընկերությունը: Այս կը հաւատար, թէ առեւտրական մտեցումները նպաստաւոր երկու արդիւնք կրնայ արձանագրել արուեստներու մէջ: առաջին, անիկա կը պարտադրէ նիւթական հաշուետուութիւն, զոր թուիտի կը նկատէ հաստատություններ մը երկարաժամկետ ճամբան, եւ երկրորդ, ան օրհնաբեր կը նկատէ «սեփական մարզին դերակատարությունը», որովհետեւ անիկա նուազ ծանրաբեռնուած է պայմանագրուած ընկերութիւններով: Այն կը մերժէ ընդունիլ այն գաղափար, թէ ընկերություններ, որոնք արուեստի հիմնարկներ կը հովանաւորեն, կը ձգտին ճշմունք բանեցնել արուեստագէտներու կամ մշակութային կառույցներու ստեղծագործական ուղղությունները:

Արդեօք արուեստի եւ առեւտուրի «ամուսնությունը» կրնայ յաջողի: «Թայմ» կը քննէ պարզապէս 3 երկիրներու, ուր գեղարուեստական տեսլականը կը հանդիպի տնտեսական ճնշումներու (տեքստիլ քլոյի սինկլեթերը):

«ՊԵՏՔ Է ԽՈՒՍԱՓԻՆՔ ԿԱՃԱՌԵԼԻ ԲԱՆ ՄԸ ԳՏՆԵԼՈՒ ԸՆՇՈՒՄԷՆ»

ԻՏԱԼԻԱ ԾԱԽՈՒ ԿԸ ԳՆԷ ԻՐ ԱՉԳԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ՝ ԱՆՈՆՑ ՀՈՎԱԼՈՒ ԱՆՔԱՒԱՐԱՐ ԳՈՒՄԵՐՆԵՐՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

«Իտալիոյ հարստութեան գլխաւոր աղբիւրը անոր գեղարուեստական տեսլականն է, - կ'ըսէ մշակույթի նախարար եւ արուեստի պատմաբան Անթոնիո Փաուլուչի:- Արուեստը, պատմությունը, նորաձեւությունները, խոհանոցը, արհեստները, ձեւագծումը... փիցցայն մինչեւ Պոթիլիէլլի»: Սակայն ներկայիս այս ժառանգություններ մեծ մասը, ինչպէս՝ Պոմպէյի աւերակները, Քրիստոսումը եւ նոյնիսկ՝ Ուֆֆիցի պատկերասրահը կրնան ծախու գրուիլ պարտքեր վճարելու համար:



Քրիստոսումը կրնայ ծախու գրուիլ...

Իտալիոյ հանրային պարտքերը 1,34 միլիարտ եւրոյի հասան 2002ին: Այս ճնշումը պատճառով իտալիոյ խորհրդարանը անցեալ տարի վաւերացուց օրէնք մը, որ իրաւաստություն կու տար բաժնեյուր իտալիոյ մշակութային հովանաւորությունները: Այսպէս, երկու ընկերություններ՝ «Փաթիլիմոնի» եւ «Ինֆրասթրուկտուր» իրաւունք ունին ծախելու կամ վարձու տալու պատմական կառույցներ, արուեստի գանձեր, կամ՝ բնական աղբիւրներ, ինչպէս՝ կղզիներ, ծովափներ եւ անտառներ, որոնք պետություն կը պատկանին:

Երբ արուեստի մարզերու մէջ աշխատողներ եւ կենսոլորտի պաշտպանները ցոյցեր կազմակերպեցին ամբողջ երկրին տարածքին՝ բողոքելով նոր օրէնքին աղօթ բանաձեւումին եւ կասկածելի գործընթացին դէմ, մշակույթի նախարար Ճիւլիանօ Ուրպանի յայտարարեց, թէ Մշակութային ժառանգությունները Պաշտպանությունները պետական խնամախոսութիւն պարտականություններն էր որոշել, թէ ո՞ր ստացուածքները ծախու են: Այս յանձնախումբին մաս կը կազմէ նաեւ Փաուլուչի, որ կ'ըսէ, թէ վերջին խօսքը կը պատկանի մշակութային նախարարութեան: «Յանձնախումբին նպատակը մեր մշակութային ժառանգությունները պահպանելն է, - կ'ըսէ ան: - Տնտեսական նախարարություններ նպատակն է դրամ շահիլ»:

Օրինակ, 17րդ դարու Վիլլա Ֆրանչեսկա Պելլա-

Լիսթան, որ պարտք ժամանակաշրջանի գլուխ գործոց մըն է եւ կը գտնուի Ֆլորանսէն 30 վայրկեան հեռու, այժմ վրտուած է: Եթէ գնորդ մը առաջարկէր վերանորոգել զայն եւ վերածել համազումարներու վայրի, տնտեսական նախարարությունը հաշուապահները ուրախ պիտի ըլլային, սակայն ոչ՝ Սեթիս, որ կ'ըսէ. «Պատմական հարուստը սեփական բնակարաններ վրտած կը մնան, սակայն պետությունը չի ստիպեր, որ անոնց սեփականատէրերը վաճառեն գանձեր»:

Սեթիս կ'առաջարկէ պատրաստել պետություն պատկանող մշակութային ստացուածքներու ցանկ մը, ինչ որ դիւրին չէ իտալիոյ նման հարուստ ժառանգություններ կրող մը մէջ: Ան կ'առաջարկէ ցանկը բաժնել 3 մասի. մշակութային հետաքրքրություններ ներկայացնող ստացուածքներ, որոս կարելի է վաճառել, զուտ մշակութային հետաքրքրություններ ներկայացնող ստացուածքներ, եւ ստացուածքներ, որոնց համար յատուկ չափանիշներ պէտք է ճշդուին, որպէսզի կարելի ըլլայ գիտնալ, թէ ի՞նչ բաներ կարելի է վաճառել: «Պէտք է խուսափինք վաճառելի բան մը գտնելու ճշմունքէն, - կ'ըսէ Սեթիս: - Այսօրուան հրամայականը շատ փոքր գաւոր օրէնքի մը սրբագրումն է»:

«ԳԻՏՆԱԿԱՆ ԱՄՔՆ ԻՆՉԻ ԳԻՆԸ, ԲԱՅՑ՝ ՈՉ ՄԷԿ ԲԱՆԻ ԱՐԺԷՐԸ»

ԼՈՆՏՈՆԻ ԱՉԳԱՅԻՆ ՕՓԵՐԱՅԻՆ ՄԷՋ ՍԵՂՄՈՒՄՆԵՐԸ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՒ ԱՆԿՈՒՄԻ ՄՏԱՎԱԽՈՒԹԻՒՆ ԿԸ ԱՏԵՂԾԵՆ

Անգլիոյ Ազգային օֆերային երգիչներ այս տարուան սկիզբը «գործադուլի երգեցողություններ» մը կատարեցին Լոնտոնի Ս. Փօլ'գ եկեղեցիին մէջ: Օֆերային պարերը կը հասնէր 1,75 միլիոն սթերլինի: Անոր վարչական պատասխանատուները կ'առաջարկէին, որ 60 հոգիանոց երգչախումբը կրճատուէր մէկ երրորդ համեմատություններով:

նուսնները:

Նման մտեցում մը կը նշանակէ «գիտնալ ամէն ինչի դիւր, բայց՝ ոչ մէկ բանի արժէքը», կ'ըսէ դերասանուհի Ֆրանսա-ձէյն Ուէսթըն, որ ներկայ եղած է Ս. Փօլ'գ եկեղեցիին մէջ տեղի ունեցած բողոքի համերգին՝ կրկնելով Օսթար Ուայլիի խօսքը:

Սակայն առաջին անգամը չէ, որ Անգլիոյ Ազգային օֆերային կը դիմագրաւէ տնտեսական դժուարությունները: Անիկա անցեալ տարուան ընթացքին 20 միլիոն սթերլին ստացուած պետություններէն, որ կ'առահովէ օֆերային պիտոճէին 53 առ հարիւրը: Տոմսերու վաճառքը կ'ապահովէ օֆերային նիւթական կարիքներուն 28 առ հարիւրը, իսկ սեփական մարզի հովանաւորություններ՝ 10 առ հարիւրը:

Օֆերային նաեւ այս օրերուն կ'արդիականացընէ իր սրահը՝ «Լանտըն Քոլիսէում»ը, որուն վերանորոգություններ ծախսերը կը գնահատուին 59 միլիոն սթերլինով: 1997ին օֆերային յաւելեալ 13 միլիոն սթերլինի գումար մը պահանջած էր պետություններէն՝ իր պարտքերը վճարելու եւ նիւթական կառուցումները վարձելու համար: 2002ին անիկա դարձեալ յաւելեալ գումարներ խնդրած էր նոյն նպատակով:

Սակայն որեւէ գումար յատկացնելէ առաջ պետությունը կը պահանջէ, որ օֆերային պաշտպանները իր երկարատեւ հարցերը դիմագրաւելու յանձնարարութիւնը: Օֆերային ընդհանուր տնօրէնությունը կողմէ ներկայացուած «փրկություններ» ծրագրին՝ մը համաձայն, օֆերային 520 անդամներէն 100ը գործէ պիտի արձակուին, եւ ոմանք ազատ աշխատակիցներ պիտի դառնան:


Քննադատներ կ'ըսեն, թէ երբ երգչախումբի մը անդամները իրաժամ փորձեր չեն կատարեր միասին, չափանիշներ անկում կ'արձանագրեն:

Պատրաստեց
Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

ՍԵՓԱԿԱՆ ՄԱՐԶԻՆ ՇԵՏ ԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ԺԻԳ

ՃՐԱՆՍԱՅԻՔ ԻՐԵՆՑ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏԻՆ ՄԻԱՅՆ 1 ԱՌ ՀԱՐԻՒՐԸ ԿԸ ՑԱՏԿԱՅՆԵՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ

Յրանսայի մէջ պետություն կողմէ արուեստներու հովանաւորությունները նոյնքան հին է, որքան՝ Յրանսական յեղափոխությունները: Պահպանողականներ եւ ընկերակարականներ «մշակույթի մարզին մէջ ներդրումները կը պաշտպանեն նոյն եռանդով ու համոզումով», կ'ըսէ մշակույթի նախարար Ժան Ժաք Ալակոն: Պատճառը գործնապայառ մտեցումն է: Տնտեսական ներկայ պայմաններուն մէջ «Քրոմետի Յրանսէզ»-ի եւ «Սանթր Փոմփիտու»-ի նման մշակութային հաստատություններ, ինչպէս նաեւ հարիւրաւոր այլ փոքր թատրոններ ու արուեստի կեդրոններ չեն կրնար գոյություն ունենալ՝ առանց պետական զօրակցությունների: «Անոնց գոյությունը անհրաժեշտ կը համարենք», կ'ըսէ Ալակոն: Սակայն կառավարություններ միշտ այլ խիստ ճնշումի տակ եղած են: Նոյնիսկ, երբ 2003ի պետական պիտոճէին մէջ 5 առ հարիւր համեմատությունները բարձրացաւ մշակութային հաստատություններու եւ ազգային կոթողներու յատկացուած նիւթական նպաստը, Ալակոն կը յուսար նաեւ սեփական մարզէն գումարներ ապահովել:



«Սանթր Փոմփիտու»-ի նման մշակութային արուեստի կեդրոններ չեն կրնար գոյութիւն ունենալ՝ առանց պետական զօրակցությունների:

փական եկամուտի վրայ տուրքերը կրճատելով 20 առ հարիւրով (համեմատությունները ներկայիս 10 առ հարիւր է):

Ալակոն սահմանափակ օրէնքներ արդէն ի գործ են 2002ին ի վեր: Անոնք առիթ կու տան, որ «ազգային գանձ» մը գնելու նպատակով պետություն կատարուած նուիրատուութեան մը պարագային տուրքերը կրճատուին 90 առ հարիւրով: Այս օրէնքին համաձայն, սեփական մարզին նուիրատուութեամբ գնուած արուեստի առաջին գործը այժմ կը ցուցադրուի Լուվրի թանգարանին մէջ: Նուէրը կ'ընդգրկէ 18րդ դարուն անասունները գեղանկարող արուեստագէտ Ժան-Պաֆիթիս Օտրիի 9 գեղանկարները: Զարդարային ոճով իրագործուած այս հսկայական գեղանկարները կ'արժեն աւելի քան 3 միլիոն եւրօ: Գնուածը վճարած են ինքներքու վաճառուները: Մեծ ընկերությունները՝ «Փի. Ջի. Է. Զուրտինկ», ինչպէս նաեւ՝ երկու այլ նուիրատուներ: Վերսայի պալատին հայելիներու սրահը եւ կը վերանորոգուի շինարարական սեփական ընկերությունները մը կողմէ, որուն նախագահը վերջերս արժանացած է «Մեծ բարեսէր» շքանշանին. նոր հաստատուած պատիւ մը, որ Ֆրանսական երանք մը կու տայ բարեսիրություններ:

Արուեստներու մէջ սեփական մարզի շահարկումները տակաւին տարտամ են, առաւելաբար անոնց դիմաց՝ տուրքերու կրճատման օրէնքի մը բացակայությունները պատճառով: Յրանսայից ներկայիս իրենց տարեկան եկամուտին միայն 1 առ հարիւրը կը յատկացնեն բարեսիրական նպատակներու: Միացեալ Նահանգներու մէջ համեմատությունները 2,1 առ հարիւր է: Յրանսայի տարածքին կը գործեն մշակութային միայն 600 սեփական հաստատություններ, մինչդեռ Գերմանիոյ մէջ անոնց թիւը կը հասնի 2000ի, Բրիտանիոյ մէջ՝ 3000ի, իսկ Միացեալ Նահանգներու տարածքին՝ 12 հազարի: Ալակոն կ'ըսէ փոփոխություններ մը յառաջացնել: «Պետությունը պէտք է վախճի սեփական մարզին հետ գործակցելէ», կ'ըսէ ան: Նման գործակցությունները քաղաքներու նպատակով մշակույթի նախարարը կ'առաջարկէ տուրքերու 60 առ հարիւրի կրճատումը: «Հանրային նպատակներու» համար տրամադրուած նուիրատուություններու պարագային, սե-

Իրեւ հակազդեցությունները բրգչախումբին անդամները մերժած էին երգել Պերլոզի «Տրովադայի գրաւումը» օֆերային մէջ, որ յայտարարուած էր նախապէս եւ ուղղուած էին Ս. Փօլ'գ, կատարելու համար Վերտիկ Հոգեհանգրտեան պատարագը: Թեւոր երգիչը Տէյվիլի Տայըր ունկընդիւրներով լեցուն եկեղեցիին մէջ յայտարարեց, թէ առաջարկուած միջոցառումը համազօր էր «մշակութային բարբարոսություններ»:

Օֆերային վարչական գլխաւոր պատասխանատուները գրաւատնային ներդրումներու մասնագէտ մըն է, հետեւաբար քննադատներ աւելի դիւրութեամբ կը մտնան նշեն, թէ ան պարագայէ կը գերադասէ նիւթական նկատա-

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ ձեռնարկել փափաքողները կը խնդրուի ծանուցումի բնագիրը ընթացակարգով (հաստատութեանց պարագային) նախարար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ ներկայացնել «Ազդակ» ծանուցումներու գրասենեակը:

ՕՐԱՏԵՏՐ

ՀԱՄԱԼՄԵՐՈՒՄ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԳ



Այսօր, Ուրբաթ 12 Դեկտեմբեր, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան» Հ.Մ.Ը.Մ. Մարզամշակութային համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ, տեղի պիտի ունենայ Արցախէն ժամանած հոշակաւոր նկարիչ Սամուէլ Գաբրիէլեանի գործերու ցուցահանդէսը, նուիրուած Արցախի Ֆոնտին, հովանաւորութեամբ Պուրճ Համուտի քաղաքապետական խորհուրդին: Ցուցահանդէսը կարելի է այցելել մինչեւ 14 Դեկտեմբեր առաւօտեան ժամը 11:00էն մինչեւ երեկոյեան ժամը 9:00:

ՄՅՍՕՐ

- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ լիբանանահայ երիտասարդ արուեստագետներու գործեր, ԵՈՒՆԵՍԿՕ միջին 12 Դեկտեմբեր:
- Հայկական ծնագործներու ցուցահանդէս՝ «Փրօմընտ» պանդոկին մէջ, մինչեւ 19 Դեկտեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Միզգիք ին Սայրն» Հայկազեան համալսարան, մինչեւ 19 Դեկտեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Տըլա փեթիլը սեմփլըման», Սամիր Թապէթի գործերը, «Ալիա Մոդապոլի» ցուցասրահ, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Հիսթորիա տորմիր տեպու», Ֆուլվիո Քոստի գործերը, «Էսփաս Է. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 13 Դեկտեմբեր:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Լա Ռըշերշ տը լ'օմ օ սայլ», Անթիլիքա Տրետորի գործերը, «Կեօթ» հիմնարկ, մինչեւ 19 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Կարնո է Ժեօն», «Ժանիկ Թուպյեյ» ցուցասրահ, մինչեւ 31 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Քիւլ պիթ», Քրիս Մերթի Թեյ - Լէյնի գործերը, «Ֆրենչ» ցուցասրահ, մինչեւ 7 Յունուար:
- Թատրոն՝ «Քառաւ ալա արտ, քաղաքի մին... ֆաուր», ժամը 20:30ին, «Քաղցին տիւ Լիպան», մինչեւ 29 Փետրուար:

ՕՐԵՐԵՆՈՅԹ

ՈՒՐԱԹ,
12 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003

ՊԵՅՐՈՒԹ
ՄԱՍԱՍԲ ԱՄՊՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ
ՑԵՐԵԿ 21°C

ԳԻՇԵՐ 12°C

ՈՂՆԱՌՈՒԹԻՒՆ՝
50%

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 35ԱՄԵԱԿԸ՝ ՀԱՏԵԹԻ ՄԵՉ

Կիրակի, 6 Դեկտեմբեր 1953ի առաւօտեան ժամը 11:00ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 35ամեակի տօնակատարութիւնը, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Հատկի մասնաճիւղին, տեղւոյն ակումբին մէջ: Հանդիսին յայտագիրը կը վարէր եղբայր Խորէն Յակոբեան, որ յաջորդաբար խօսելու հրաւիրեց եղբայրներ Կարապետ Յակոբեանը եւ Յովհաննէս Տագեւեանը, որոնք վեր առնելով Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան ու զարգացման փուլերը՝ ամփոփ գծերու մէջ բունցին Հ.Մ.Ը.Մ.ի կատարած դերը գաղափարի մէջ եւ յորդորեցին ներկայից, որպէսզի բոլորիս Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ, որովհետեւ այս երիտասարդական առոյգ կազմակերպութիւնը հաւատարիմ կը մնայ մեր ազգային իտեալներուն եւ արժանի է ամեն գնահատանքի ու քաջալերանքի: Եղան յաջող արտասանութիւններ. եղբայր Խորէն Յակոբեան արտաստեց:

ՆԱՅՍՕՐ 12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

- 1854.- Ծնունդ վիպագիր Մուրացանի (Գեորգ Տըր Յովհաննիսեանի):
- 1930.- Մահ Սաբէնիկ Արղուբեանի, անձուկը յեղափոխական: Իշխան Յովսէփ Արղուբեանի արժանաւոր կինը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԽԱՉԻԿ ՊԱՍՄԱՃԵԱՆԻ Գահատակութեան 21րդ տարեդարձին, ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹԵՆՔԵՐԵԱՆԻ եւ ԽԱՉԻԿ ԱՐԱՊԵԱՆԻ յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, Մարաշի Ս. Զառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐՏԱՇԷՍ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ մահուան 10րդ տարեկիցին եւ ԼՈՒՍԻՆ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ մահուան Ե. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, Հայաշէնի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԿՐՏԻՉ ԽՇՏՐԱՐԵԱՆԻ (ԱԻԱԳ ՍԱՐԿԱԻԱԳ) մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԻՐՎԱՐԴ ՊՈՅԱՃԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՆԱԳ ՕՉԱՆՆԵՄԵԱՆԻ մահուան Ե. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԼՈՒԻՉԱ ՊԵՔԵՐԵՃԵԱՆԻ (Ծնեալ՝ Մագուտեան) մահուան Ա. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՒԵՏԻՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ (մահացած՝ Հալէպ) մահուան եօթնօրեակի առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, Նոր Սարաշի Ս. Զառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՆԺԷԼ ՍԱՆՈՐԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, Նոր Սարաշի Ս. Զառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐՇԱԼՈՅ ՄԱՆՃԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, Ժուհի Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍՕՍԻ ՈՒՐՅԱԼԵԱՆԻ մահուան Գ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, Ժուհի Ս. Զարուբին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏՕՆԻԿԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Դեկտեմբեր 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉՔԱՌ ԹԻՒ 5612 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ԸՈՐԻՉՈՒԱԿԱՆ	ՈՒՂԱՐԱՅԵԱՑ
1. Հ. Վահան Յովհաննէսեանի երկերէն:	1. Առանձին - Արական անուն:
2. Խաղի դատարար:	2. Արեւելեան Եփրատ - Չայնանի:
3. Նամակներու ամբողջութիւն:	3. Բազմութիւն - Եզր:
4. Չաչ - Երկնային լուսար մարմին:	4. Նմանապէս այլ բաներ:
5. Գափնի - Մորթէ շինած պարկ:	5. Միջազգային ընտանիք - Յոյն դիցունէի:
6. Յրանսական քաղաք - Ջրախառն մածուն:	6. Գեղեցիկ արքայ - Ոսկիներ:
7. Անդունդ - Աննման, չնաչխարհիկ:	7. Քրիստոս Հոն հարսնելոր էր - Գլխարկ:
8. Յովսէփի առջինեկը:	8. «Հոգեւոր սուր» կոչւած հայ կաթողիկոս:
9. Ճոկան - Լար:	9. Իգական օտար անուն - Ժխտական մասնիկ:
10. Արական անուն - Իրերայաջորդ տառեր:	10. Կնատի - Քուն:

ԹԻՒ 5611

ԽԱՉՔԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	Մ	Ղ	Յ	Ի	Ր	ՈՒ	Ս	Ա
2	Ա	Ղ	Ե	Ր	Փ	Փ	Ա	Ս
3	Ս	Ա	Ղ	Ր	Ս	Ա	Ղ	Ա
4	Ե	Մ	Ա	Հ	Ր	Ա	Ր	Ա
5	Ս	Ա	Ղ	Ս	Ա	Ղ	Ր	Ս
6	Ա	Ղ	Ե	Վ	Ս	Ա	Ղ	Ա
7	Ս	Ս	Ս	Յ	Ղ	Ն	Ո	Ս
8	Ե	Ղ	Ն	Ա	Մ	Ե	Ր	Ր
9	Ն	Ա	Ղ	Ն	Ո	Ս	Փ	Ա
10	Ա	Ղ	Ե	Ր	Ս	Ա	Ղ	Ա

ար ԳԴ

bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարահին մէջ օտար դրամահիշներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի բուլետեան տինար	28,70 - 28,90 լ.ն.
Ֆուլիթեան տինար	5112,00 - 5137,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	3985,00 - 4010,00 լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տիրիամ	410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան դիալ	413,75 - 415,75 լ.ն.
Սէուտական դիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան դիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կինէ	220,00 - 230,00 լ.ն.
Անգլիական սթըրլին	2627,00 - 2637,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1180,00 - 1185,00 լ.ն.
Թրքական լիրա	103,75 - 104,25 լ.ն.
Կիպրական փաունտ	3110,00 - 3135,00 լ.ն.
Ճապոնական հապար եէն	13,80 - 13,90 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1137,00 - 1142,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	1106,00 - 1111,00 լ.ն.
Եւրօ	1832,00 - 1842,00 լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	155,000 - 160,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	140,000 - 145,000 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	129,500 - 134,500 լ.ն.
Մեքսիքական փէսոս	744,000 - 764,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	19,425,000 - 19,625,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	403,25 - 403,75 \$
Մէկ օնս արծաթ	5,50 - 5,52 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.2150 - 1.2155
Քանադական տոլար	1.3222 - 1.3227
Չուիցերիական ֆրանք	1.2762 - 1.2767
Ճապոնական եէն	108.32 - 108.37
Մէկ սթըրլին	1.7428 - 1.7432

Մէկ փոլար 565 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

ԳԻՈՒ Ա. ԵՂՈՒՄ ԳԻՈՒ Բ. ԵՂՈՒՄ

Ա. կարգ - - - - -

Բ. կարգ - - - - -

ԼՈՒՄԱՅԱՓՈՒ ԱԼԵՋԱՆԵԱՆ ՀԵՒ. 01-252852

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

ԽՈՑ (21 Մարտին 20 Ապրիլ)

Կը մտադրէք ճամբորդել տօնական օրերը արտասահմանի մէջ անցընելու՝ կամ բարեկամներով քանի մը օր մեկուսանալու, հանգստանալու եւ զուարճանալու: Ձեր տրամադրութիւնը օգտակար պիտի ըլլայ: Ուրեմն կատարեցէք:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Օրը յարմար է առեւտրական կամ մշակութային գործերու վերաբերեալ համաձայնագիր մը կնքելու: Շահաւէտ այս գործառնութիւնը առիթ պիտի ստեղծէ ապագայի յաջողութեանց:

ԵՐԿՈՒՆԻՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)

Նոր նախաձեռնութիւններու մասին կը մտածէք: Մի՛ տատամսիք: Ինչ որ կը մտածէք, ձեր նախազգացումին ներշնչումէն կը ծնի: Ուրեմն հետեւեցէք ձեր զգացումներուն թերադրանքին:

ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)

Կ'արտայայտէք յուսահատի տրամադրութիւն մը, որ հիմք չունի: Ձեր գործերը լաւ կ'ընթանան այս օրերուն, ուրեմն ինչո՞ւ կը մտածաք զուր տեղ: Յոռի մտածումներ հեռացուցէք ձեզմէ:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Լաւատեսութեամբ պիտի սկսիք օրը եւ այս տրամադրութիւնը պիտի շարունակուի մինչեւ իրիկուն: Օրը իրեն հետ պիտի բերէ անակնկալ շահեր եւ նոր յոյսեր: ԿՈՑՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Տխուր կամ շփոթ օրեր ձեր ետին ձգած էք: Այսօր ժամն է նոր թափով աշխատանքի սկսելու, որպէսզի գոհունակութեամբ եւ ցնծութեամբ դիմաւորէք Նոր Տարին: Մի՛ մոռնաք պատրաստելու ձեր աւանդական տօնածառը:

ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Պ տարուբերիք առաջարկներ ընդունելու եւ որոշում տալու կասկածոտ արամադրութեան մը մէջ: Մինչդեռ, եթէ ձեր շուրջը նայիք, պիտի հաստատէք, թէ շուրջելու պատճառ չունիք: Լաւատեսութիւնը ձեզ առողջ պիտի պահէ: Ուրեմն ժպտացէք կեանքին:

ԿՈՒԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Բազմատեսակ պարտականութիւններ տանձնած էք: Այսօր քիչ մը ծանրաբեռնուած պիտի ըլլայ ձեր օրը, բայց ամէն հարց պիտի լուծուի ամենայն կանոնաւորութեամբ: Մտահոգուելու ոչինչ ունիք: Իրիկունը կանուխ անկողին մտէք:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Պաղառութեան կամ հարգուի յիման անհանգստութիւն մը ձեզ պիտի մտահոգէ պիտի ըլլայ: Հանգիստի ժամանակ տրամադրեցէք: Ասիկա հաւանաբար հետեւանքն է կլիմայական փոփոխութեան նկատմամբ վերջին օրերուն ձեր անխոհեմութեան:

ԱՅԾԵՂՁԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Կարեւորութիւն մի՛ տաք ըսի - ըսաններուն: Հեռու մնացէք շատախօսու թեթեւամտ անձերէ: Այսօր հրեւեր պիտի դիմաւորէք, շատ ուրախ պիտի ըլլաք անոնց հետ:

ԾՈՎԱՆՈՑ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Երկմտութեամբ մի՛ մօտենաք հարցի մը, որ շատ յստակ է: Յարգեցէք ձեր խօսակցիցին կարծիքը: Մարդ երկխօսութեամբ կրնայ համակրանքի արժանանալ: Գիտցէք մտիկ ընել, խօսելէ աւելի:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Լաւատես եղէք, մի՛ ծուլանաք պարտականութիւններ կատարելու: Ձեր գաւազները կարիք ունին ձեր օգնութեան: Եթէ շուկայ երթաք, ականջ տուէք անոնց փափաքներուն եւ յարգեցէք փոքրերուն ճաշակը:

